ԱՄՆ 41-րդ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը որպես միջնորդ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բրյուսովի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ԱՄՆ 41-րդ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմի քաղաքականությունը նորանկախ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ու դրա դրդապատճառները: ԽՍՀՄ փլուզումը ԱՄՆ-ին հնարավորություն էր տվել հանրային դիվանագիտության և փափուկ ուժի կիրառմամբ հարաբերություններ ձևավորել նորանկախ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի հետ: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը միտված ջանքերը գործադրվում էին ինչպես հանրային քաղաքականության, այնպես էլ կուլիսային դիվանագիտության կիրառմամբ՝նպատակ ունենալով ստեղծել այնպիսի միջավայր, որը բարենպաստ կլիներ Միացյալ Նահանգների համար՝ տարածաշրջանում ազդեցիկ դերակատարություն ունենալու տեսակետից: Ուսումնասիրության հիմնական առարկա են դարձել Սպիտակ տան, Պետական դեպարտամենտի, Ազգային անվտանգության խորհրդի, ինչպես նաև այլ պետական հաստատությունների գաղտնազերծված փաստաթղթերը, որոնք նոր փաստեր են պարունակում տեղի ունեցած զարգացումների և դրանց մեջ Միացյալ Նահանգների, Թուրքիայի և Հայաստանի դերակատարության վերաբերյալ:

Բանալի բառեր

ԱՄՆ, Նախագահ Ջորջ Հ. Ու. Բուշ, Հայ-թուրքական հարաբերություններ, դիվանագիտություն, միջնորդություն:

Նախաբան

Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը 1991թ.

դեկտեմբերի 24-ին, այդուհանդերձ Հայաստանի և Թուրքիայի սահմանները մնացին փակ, իսկ դիվանագիտական հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին: 1993թ. Թուրքիան միակողմանի փակեց օդային և ցամաքային սահմանը Հայաստանի հետ: Ցամաքային սահմանի վերաբացմանը և դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում են Թուրքիայի առաջ քաշած մի շարք նախապայմաններ:[1]

ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման տեսակետից ունեցավ երկակի նշանակություն: Մի կողմից, այն առաջադրեց նոր մարտահրավեր՝ զգալիորեն թուլացնելով Թուրքիայի նշանակությունը, որպես ԱՄՆ գլխավոր գործընկեր ԽՍՀՄ հարավային սահմանների մոտ, մյուս կողմից՝ միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակը և երկբևեռ աշխարհակարգի փլուզման ու երկրորդ բևեռի վերանալու արդյունքում տարածաշրջանում առաջացած ուժային վակուումը տեսականորեն անսահմանափակ հնարավորություններ ստեղծեցին Թուրքիայի համար:[2]

90-ականների սկզբին, երբ Ռուսաստանը բախվել էր հետխորհրդային ներքաղաքական տրանսֆորմացիայի գործընթացով պայմանավորված բազմաթիվ մարտահրավերների, պաշտոնական Անկարան համարեց, որ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ձևավորվել է բարենպաստ իրավիճակ՝ այդ տարածաշրջաններն իր գերակա ազդեցության գոտիների վերածելու համար:[3] Միաժամանակ, Թուրքիայի դերը շարունակում էր կարևոր մնալ ԱՄՆ համար Իրանին զսպելու և Մերձավոր Արևելքում՝ մասնավորապես, Իրաքում ԱՄՆ ռազմական գործողությունների իրականացման տեսանկյունից, որպես ՆԱՏՕ-ի

[1] Relations between Turkey and Armenia, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-armenia.en.mfa

[2] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.** Թուրքիայի արտաքին արտաքին քաղաքականության ձևավորման նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները: *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014թ. 2, 141

[3] **Torosyan T.**, The Return of Turkey, *Russia in Global Affairs*, 2009, 3, July September, 120-129.

անդամ միակ պետություն, որ ցամաքային սահման ունի Իրաքի հետ:

Անհերքելի է, որ ներքին խնդիրների հաղթահարումից հետո Ռուսաստանը ակտիվացնելու էր իր քաղաքականությունն առաջին հերթին նախկին ԽՍՀՄ պետությունների ուղղությամբ՝ որպես իր ազդեցության կենսական գոտի, հետևաբար Թուրքիան պետք է փորձեր հնարավորինս արագ քայլեր ձեռնարկել իր հարևանությամբ գտնվող տարածաշրջանում դիրքավորվելու համար: Այդ նպատակով 1990-ականների սկզբին Թուրքիան որոշ քայլեր ձեռնարկեց՝ բարելավելու Հայաստանի հետ հարաբերությունները, հատկապես առևտրատնտեսական ոլորտում: Սակայն Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի հաղթանակները Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում հակահայկական տրամադրություններ առաջացրին, և 1992թ. փետրվարից սկսած՝ Ղարաբաղի հիմնահարցը դարձավ կարևոր քաղաքական գործոն Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերություններում, որի հետևանքով Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը սկսեց պայմանավորել հիմնականում այդ հիմնահարցում առաջընթացով:[4]

Տարածաշրջանային գլոբալ քաղաքականության համատեքստում կարևոր էին նաև ռուս-ամերիկյան հարաբերությունները: Ամերիկյան քաղաքականությունը կարող էր արդյունավետ լինել, եթե արագ ընթացք ունենար: Ինչպես նշում է դեսպան Կոզլարիչը, «Այդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ն խորապես ներգրավվեց այս տարածաշրջանում առաջին անգամ և օգնեց, որպեսզի այս պետությունները չխորտակվեն և պահպանեն իրենց անկախությունը Մոսկվայից, որովհետև մենք ռազմավարական նշանակություն էինք տալիս այդ տարածաշրջանին: Մեր հետաքրքրությունն էր նաև ազդեցություն ունենալ տարածաշրջանի

---

[4] **Արշակյան Գ.** Թուրք-հայկական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1995-2001թթ., *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2017, 2. 12-26. http://lraber.asj-oa.am/6556/1/12.pdf

էներգետիկ ռեսուրսների վրա և ձգտել դրանք հեռու պահել Ռուսաստանի և Իրանի ձեռքերից ու հավասարապես այդ ռեսուրսները շուկա դուրս բերել այնպես, որ դրանք կախվածություն չունենան Ռուսաստանից կամ Իրանից:»[5]

ՌԴ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ջիմ Քոլլինզը նշում է[6]. «Իր դերն ուներ նաև այն գաղափարը, որ հնարավոր է տարածաշրջանում ռուսական ազդեցության նվազեցում՝ թուրք-հայկական սահմանը բացելու միջոցով: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ կառավարության գլխավոր ռազմավարական մտահոգությունը, մասնավորապես ԽՍՀՄ փլուզումանը հաջորդած տարիների ընթացքում, կապված էր նրա հետ, որ Մոսկվան չվերահաստատի իր իշխանությունը նոր պետությունների կամ տարածաշրջանների նկատմամբ: Կային շատ տարբեր ճանապարհներ, որոնցով ԱՄՆ-ը մոտենում էր այս հարցին: Առաջինը, ըստ էության, այս նոր պետություններին միավորելն էր այնպիսի կառույցների շուրջ, ինպիսիք են ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ի միջազգային համակարգը և այլն: Այսինքն, նրանց միջազգային դիրք հաղորդելն էր և, այնուհետև, աջակցելն այդ կազմակերպությունների գործունեությանը նրանց արդյունավետ մասնակցությանը: Մյուսը ապահովելն էր, որ նրանց հարաբերություններն իրենց հարևանների հետ պատճաշ ձևով զարգացանան: Այսպիսով, այստեղ միայն Հայաստանը և Թուրքիան չէին: Մենք դա անում էինք Ղազախստանի և Ուզբեկստանի միջև, մենք դա անում էինք Ուկրաինայի և Եվրոպայի, Մոլդովայի և Ռումինիայի միջև: ... Այս համատեքստում, և շատ այլ հարցերի հետ մեկտեղ, հայ-թուրքական հարաբերությունները դիտարկվում էին որպես կարևոր գործոն: Ճիշտ է նաև, որ Թուրքիայի հետ հարաբերությունները դիտարկվում

[5] **Kauzlarich R.,** Time for Change? U.S. Policy in the Transcaucasus, https://tcf.org/assets/downloads/tcf-Kauzlarich.pdf, The Century Foundation, NY, 2001.

[6] Հեղինակի հարցազրույցը ԽՍՀՄ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար (1990-1995), Պետքարտուղարի խորհրդական ԱՊՀ հարցերով, ՌԴ-ում ԱՄՆ դեսպան (1997-2001) Ջեյմս Քոլլինզի հետ, Վաշինգտոն, 2018թ.:

էին որպես լրացուցիչ կարևոր գործոն Ղարաբաղյան հակամարտության համար: Մենք երբեք ի վիճակի չենք եղել, այսպես ասած, տարանջատել այս խնդիրները: Երբ մենք ցանկանում էինք դա անել, իրականությունն այն է, որ չէր ստացվում: Մտածում էինք, թե կարող ենք հասնել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը, և կարծում էինք, որ դա դրական ազդեցություն կունենա Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ աշխատելիս: Եվ, ըստ էության, մենք կարծեցինք, որ հարաբերությունների կարգավորումը կարևոր, առանցքային հետաքրքրություն է բոլորի համար:»

Այդ նպատակով Վաշինգտոնը փորձում էր դիվերսիֆիկացնել քաղաքական շփումներն ու հարաբերությունները ԽՍՀՄ հանրպետությունների հետ, չնայած դրանց անկախությունը դեռևս ֆորմալ առումով չէր ճանաչել:

Հայ-ամերիկյան հարաբերությունների մեկնարկը

1991թ. նոյեմբերի 11-ին Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը երդմնակալության արարողության ժամանակ, անդրադառնալով արտաքին քաղաքականությանը, նշել էր. «Նկատի ունենալով, որ հանրապետության ներկա իշխանությունների ամենալուրջ թերացումը եղել է արտաքին հարաբերությունների ոլորտը, անհրաժեշտ է շուտափույթ ակտիվացնել արտաքին գործերի նախարարության գործունեությունը և եռանդուն կապ հաստատել մեզ համար շահագրգռություն ներկայացնող բոլոր երկրների հետ՝ ձգտելով հասնել լիակատար քաղաքական անկախության, դառնալ միջազգային իրավունքի սուբյեկտ, Միավորված ազգերի կազմակերպության անդամ, միաժամանակ, մեր շահը պահանջում է մասնակցել նախկին Խորհրդային Միությունում իրականացվող բոլոր կառուցողական գործընթացներին և միջհանրապետական տնտեսական ու քաղաքական մարմինների գործունեությանը՝ եթե ոչ անգամ այդ գործընթացների հաջողության նկատմամբ տածած համոզումով, ապա գոնե հանրապետության վիճակը անցանկալի ցնցումներից

զերծ պահելու մտահոգությամբ։ ...Կայուն առևտրական և տնտեսական հարաբերություններ հաստատել մեր անմիջական հարևանների՝ Թուրքիայի և Իրանի հետ՝ Հայաստանը հաղորդակցության փակուղուց բանուկ միջազգային խաչմերուկի վերածելու նպատակով։»[7] Բնականաբար այս հայտարարությունը ի նկատի էր առնվել և՛ Անկարայում և՛ Վաշինգտոնում։ Հաշվի առնելով Ռուսաստանի պատմական ներկայությունն ու ազդեցությունը տարածաշրջանում, ինչպես նաև ռուս-ամերիկյան հարաբերությունների հնարավոր լարումը ոչ հեռու ապագայում, Տեր-Պետրոսյանը հայտարարում է, որ նորանկախ Հայաստանը պետք է խորացնի իր հարաբերությունները բոլոր խորհրդային հանրապետությունների, առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ։

Հատկանշական է, որ Հայաստանի Նախագահի պաշտոնը ստանձնելուց մեկ օր անց Լևոն Տեր-Պետրոսյանն առաջին պաշտոնական այցը կատարեց Միացյալ Նահանգներ։ 1991թ. նոյեմբերի 13-ին Վաշինգտոնում նա հանդիպեց պետքարտուղարի պաշտոնակատար Լոուրենս Իգլբուրգերի հետ՝ Պետական դեպարտամենտում։[8] Հանդիպման անկյունաքարային թեմաներից էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը։ Հաշվի առնելով Թուրքիայի կողմից Ադրբեջանի ճանաչումն ու տարածաշրջանում աշխարհաքաղաքական հավասարակշռության խախտումը, Տեր-Պետրոսյանը առաջարկում է ԱՄՆ-ին տարածաշրջանում անվտանգության «վերադասավորումներ» նախաձեռնել։ Նա նշում է, որ Հայաստանում բավական բարդ ձմեռ է սպասվում և խնդրում է ԱՄՆ միջնորդությունը՝ Թուրքիայի կողմից սահմանի բացման վերաբերյալ, որպեսզի հնարավոր լինի բեռնափոխադրումներ իրականացնել դեպի Հայաստան։ Հանդիպման ընթացքում նախագահը հայտարարում է, որ ԱՄՆ-ն յուրահատուկ «պարտավորություններ» ունի տարածաշրջանում, որը ձևավորվել է Թուրքիայի

[7] Լևոն Տեր-Պետրոսյանի երդմնակալության արարողությանը հաջորդող ելույթը նոյեմբեր 11, 1991թ. https://www.aniarc.am/2019/11/11/ltp-11-november-1991/

[8] U.S. Department of State Case No. F-2008-02192

հետ բարեկամական և Իրանի հետ թշնամական հարաբերությունների արդյունքում: Տեր-Պետրոսյանը երեք հիմնական մարտահրավեր է առանձնացնում, որի առաջ կանգնած էր Հայաստանը. 1988 թվականի երկրաշարժի հետևանքների վերացումը, ադրբեջանական ագրեսիայի հետևանքով 300.000 փախստականներին աջակցելու խնդիրը և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակումն ու Արցախում իրականացվող բռնությունները: Իգլբուրգերը խնդրում է Տեր-Պետրոսյանին հստակեցնել, թե ինչ է նշանակում Հարավային Կովկասում նոր աշխարհաքաղաքական իրողությունը և հայտնում է, որ ԱՄՆ շարունակելու է աջակցել տարածաշրջանում անվտանգության պահպանմանը, սակայն տեղեկացնում է, որ ԱՄՆ կառավարությունը չի կարող նոր պայմանագրային պարտավորություններ ստանձնել տարածաշրջանային անվտանգության հարցերում: Տեր-Պետրոսյանը ներկայացրել է մի քանի լրացուցիչ խնդրանքներ: Նա պետքարտուղարի պաշտոնակատարին տեղեկացրել է, որ դեպի Հայաստան ավելի շատ օդային կապերի ստեղծումը և Թուրքիայի տարածքով պարենի տեղափոխման հնարավորությունը «վճռորոշ» նշանակություն ունեն, քանի որ անցած գարնանը հացի մատակարարումները բերվել էին Թուրքիայի սահմանով: Թուրքիայով մուտքի թույլտվությունը կարևոր մեխանիզմ էր՝ նվազեցնելու Հայաստանի վրա ճնշումը: Տեր-Պետրոսյանը հույս է հայտնել, որ ԱՄՆ կառավարությունը կհորդորի Թուրքիային ամբողջությամբ բացել սահմանները Հայաստանի հետ: Ըստ գաղտնազերծված հաղորդագրության, Իգլբուրգերը Տեր-Պետրոսյանին տեղեկացրել է, որ ԱՄՆ կառավարությունը Թուրքիայի կառավարությանը հորդորում է բացել իր սահմանները և Տրապիզոնի սևծովյան նավահանգիստը՝ Հայաստանի հետ առևտրի համար: «ԱՄՆ կառավարությունը կարծում է, որ Անկարան կարող է շուտով բացել նավահանգիստը: Մենք նաև հասկանում ենք, որ Թուրքիան ցանկանում է լավ հարաբերություններ ունենալ Հայաստանի հետ և շուտով կճանաչի Հայաստանի անկախությունը» նշել է Իգլբուրգերը: «Անկարան ԱՄՆ կառավա-

ությանը հայտնել է, որ այս գործընթացը առաջ կտանի, եթե Հայաստանը հայտարարություն տարածի, որով կհրաժարվի Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից և կճանաչի գոյություն ունեցող փաստացի սահմանները» նշում է Իգլբուրգերը: Նա խնդրում է Տեր-Պետրոսյանին խորհուրդ տալ, թե այս ոլորտում աջակցելու համար էլ ի՞նչ կարող են անել Միացյալ Նահանգները»:

Այն տարիներին նախագահի խորհրդական, ապա ԱԳ նախարար Վահան Փափազյանը հիշում է. «Մեր առաջարկների փաթեթը մեծ էր, բաղկացած էր մի քանի կետերից, որոնք ներառում էին հարաբերությունների ամբողջ սպեկտրը: Որոշ կետերում մենք սկսեցինք առաջանալ, բայց փաթեթի ռազմավարական իմաստը չիրականացվեց: Մարտավարական ինչ-ինչ հարցեր սկսեցին կարգավորվել՝ ավելի խորը հարաբերություններ, տնտեսական խնդիրների լուծում, Միացյալ Նահանգների ավելի մեծ ներգրավվածություն, հնարավոր ավելի մեծ ներդրումներ... Բայց պատերազմի խնդիրն ամենաէականն էր. «Պատերազմը վերջացրեք, դրանից հետո մենք ձեր առաջ կբացենք բոլոր դռները»: Մոտեցումը դա էր»:[9] Սակայն գաղտնազերծված փաստաթղթերից պարզ չի դառնում ոչ այդ «ռազմավարական իմաստը», ոչ էլ հաստատվում է ամերիկյան պայմանը:

1991 թվականի նոյեմբերի 14-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը տպագրում է Լևոն Տեր-Պետրոսյանի հոդվածը, որը ներկայացնում էր Հայաստանի պաշտոնական տեսակետը Թուրքիայի հետ հարաբերությունների վերաբերյալ՝ «Թուրքիայի հետ հարաբերություններում մենք առաջնորդվել ենք մեր որդեգրած՝ հարևանների հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքով, և այս շրջանակներում իրականացրել ենք չափազանց հետևողական քաղաքականություն՝ սկսած առաջին օրվանից, երբ «Շարժումը» ձևավորվեց, որպես հասարակաքաղաքական շարժում և որդեգրեց իր սկզբունքները: Այդ օրվանից

[9] Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԱԳ նախկին նախարար Վ. Փափազյանի հետ, Երևան 2017թ.:

մինչև հիմա մեր իշխանությունները հետևողական քաղաքակա-նություն են վարել, ոչ մի շեղում թույլ չեն տվել, եթե նկատի չունենանք քիչ առաջ հիշատակված մեր արտգործնախարարի ելույթը: Եվ պետք է ասել, որ Թուրքիայի կողմից եթե ոչ համարժեք, ապա մոտավորապես նույն դիրքորոշմանն ենք հանդիպում: Թեև պետք է նկատի ունենալ, որ այս հարցը, որքան բարդ է մեզ համար, գուցե նույնքան բարդ է Թուրքիայի համար:»[10]

Ակնհայտ էր, որ այդ հոդվածի հրապարակումը ԱՄՆ մեկնելու նախօրեին մի քանի հասցեատեր ուներ: Նախ, Տեր-Պետրոսյանը վերահաստատում է իր մոտեցումը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ՝ պատրաստակամություն հայտ-նելով այդ սկզբունքների շուրջ հայ-թուրքական բանակցություններ վարել ԱՄՆ միջնորդությամբ: Ադրադառնալով նաև ԱԳ նախարարի ելույթին, նա փորձում է մեղմել դրա հնարավոր բացասական հետևանքները Անկարայում և Վաշինգտոնում՝ հայտնելով իր անհամաձայնությունը դրա հետ և շարունակում է հավատարիմ մնալ իր դիրքորոշմանը: Հոդվածի հասցեատերն էր նաև ԱՄՆ հայ համայնքը՝ համայնքային հանդիպումներին ընդառաջ:

Ամփոփելով ամերիկյան այցի արդյունքները, կարելի է առանձնացնել հայկական կողմի կարևոր առաջնահերթություն-ները: Արտաքին քաղաքական ոլորտում դա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն էր, որի վերաբերյալ մտահոգությունները կիսում էին նաև Բուշի վարչակազմում: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը նույնպես կարևոր առաջնահերթություն էր երկու պետությունների համար և այստեղ դիրքորոշումները կարծես համընկնում էին: Ինչ վերաբերում է երկկողմ հարաբերություններ-ին, ապա չպետք է մոռանալ, որ դեռևս ԽՍՀՄ-ը գոյություն ուներ ու հարաբերությունները չէին կարող ամբողջ ներուժով զարգանալ, հետևաբար, օրակարգի գլխավոր հարցը շարունակում էր մնալ Հայաստանին աջակցություն տրամադրելը:

---

[10] Հայաստանի Հանրապետություն 14 նոյեմբերի, 1991թ. Լևոն Տեր-Պետրոսյան: Ընտրանի, Երևան 2006, էջ 305–328:

1991 թվականի դեկտեմբերի 25-ի երեկոյան, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշն իր Սուրբ Ծննդյան ուղերձում հայտարարեց. «ԱՄՆ-ն ճանաչում է Ուկրաինայի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի անկախությունը: Բոլոր այս պետությունները հստակ հանձնառություններ են ստանձնել: Մենք շատ արագ դիվանագիտական հարաբերությունները կհաստատենք այս երկրների հետ, նոր կապեր կստեղծենք: Մենք կաջակցենք անդամակցելու Միավորված Ազգերի Կազմակերպությանը այն պետություններին, որոնք դեռ անդամ չեն:»[11] Հատկանշական է, որ ճանաչվող պետությունների ցանկում Ադրբեջանը չկար:

Հայ-թուրքական հարաբերություններն ամերիկյան ուշադրության կենտրոնում. գաղտնազերծված զարգացումներ

Պետքարտուղարության գաղտնազերծած արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ամանորյա արձակուրդի ժամանակ ԱՄՆ-ում գտնվող Հայաստանի արտաքին գործերի առաջին նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդիպում է խնդրել պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ: Ըստ համապատասխան զեկուցագրի,[12] Հովհաննիսյանը ցանկացել է դիվանագիտական հարաբերությունների հաստատման հաջորդ քայլն անել՝ փոխանակել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ նոտաները և քննարկել երկկողմ տնտեսական հարաբերությունները: Հանդիպումը տեղի է ունեցել հունվարի 7-ին: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման արարողակարգային մասից հետո ամերիկյան կողմը մի շարք հարցեր է առաջադրել: Մասնավորապես, Ջեյմս Բեյքերն առաջարկել է կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները, տեղեկացնելով, որ Անկարայի նկատմամբ տարածքային

[11] End of the Soviet Union; Text of Bush's Address to Nation on Gorbachev's Resignation, available from; www.nytimes.com/1991/12/26/world/end-soviet-union-text-bush-s-address-nation-gorbachev-s-resignation.html

[12] The talking points at the State Department declasified cable- U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604215

պահանջներ չունենալը և սահմանների ճանաչման վերաբերյալ համապատասխան հայտարարությունը լուրջ քայլ կլինի Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ։[13]

Հունվարի 9-ին ԱՄՆ Պետդեպարտամենտը առավել մանրամասն հաղորդագրություն[14] է ուղարկել Երևանում, Անկարայում և Մոսկվայում ԱՄՆ դեսպանություններ՝ ներկայացնելով հանդիպման արդյունքները։ Այն հաստատում է, որ պետքարտուղարը ասել է. Հայաստանը պետք է հստակեցնի իր դիրքորոշումը հայ թուրքական սահմանի վերաբերյալ։ Հովհաննիսյանը պետքարտուղարին տեղեկացրել է, որ առաջիկայում պատրաստվում է այցելել Անկարա (Պետդեպարտամենտը իր դեսպանություններին տեղակացնում է, որ Հովհաննիսյանը իրականում Ստամբուլ է մեկնելու, ոչ թե՝ Անկարա), որտեղ էլ կհստակեցնի Հայաստանի դիրքորոշումը սահմանի վերաբերյալ։ Ըստ փաստաթղթի, Բեյքերը նաև պատրաստակամություն է հայտնել աջակցել հայ-թուրքական բանակցություններին։ Դրան ի պատասխան՝ Հովհաննիսյանը վերահաստատել է, որ Հայաստանի ղեկավարությունը երբևէ տարածքային պահանջ չի ներկայացրել Թուրքիային։[15]

Հունվարի 22-ին Անկարայում ԱՄՆ դեսպանությունը զեկուցագիր է ուղարկել անձամբ պետքարտուղարին։ Զեկուցագրում, մասնավորապես, նրան է փոխանցվել տեղեկություն, որ, ըստ թուրքական աղբյուրների, Հայաստանի արտաքին գործերի նախարար Հովհաննիսյանը մտադիր է Թուրքիայի հետ քննարկել սահմանի ճանաչման հարցը՝ Սևծովյան երկրների արտաքին գործերի նախարարների փետրվարի 3-ին Ստամբուլում կայանալիք համաժողովի ժամանակ։[16]

Փետրվարի 12-ին Անկարայում ԱՄՆ դեսպանությունը ևս մեկ զեկուցագիր է ուղարկում Բեյքերին, որով փորձ է արվում

---

[13] Նույն տեղում։
[14] U.S. Department of State Cable, Case No. F-2009-03553 Doc No. C17604531
[15] The Post-Gamsakhurdia Georgia: The Crisis of Legitimacy, https://www.cia.gov/library/readingroom/docs/DOC_0005403091.pdf
[16] U.S. Department of State Cable, Case No. F-2009-03553 Doc No. C17604531 F-2009-03553

ներկայացնել Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ՝ ըստ ՀՀ նախագահի խորհրդական Վ. Փափազյանի գլխավորած պատվիրակության հետ թուրք պաշտոնյաների հանդիպումներում ձևակերպված մոտեցումների։[17] Պատվիրակությունը ժամանել էր Անկարա փետրվարի 3-ին՝ Ստամբուլում կայանալիք Սևծովյան համագործակցության արտգործնախարարների նստաշրջանից առաջ։ Օդանավակայանում պարզ է դարձել, որ նախարար Հովհաննիսյանը չի ժամանել և պատվիրակությունը գլխավորում է Վ. Փափազյանը։ Այդ և հանդիպման մասին մյուս տեղեկությունները փետրվարի 7-ին քաղխորհրդի անդամների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտնել է Արտաքին գործերի նախարարության Կովկասի գծով գլխավոր տնօրենի տեղակալ Ջանդան Ազերը։ Ըստ նրա, թուրքական կողմը շեշտել է, որ տարածքների ճանաչման ու հայոց ցեղասպանության հետ կապված հարցերը պետք է լուծվեն, որպեսզի հարաբերություններում առաջընթացը հնարավոր լինի։ Հայերը նշել են, որ հավատում են տարածքային խնդրի լուծման հնարավորությանը։ Թուրքերը հարց են բարձրացրել Հայաստանի անկախության հռչակագրում Արևմտյան Հայաստանին արված հղման մասին՝ նշելով, որ իրենք կպահանջեն տարածքային հարցերի շուրջ ոչ երկիմաստ պնդում-հայտարարություն, հավանաբար 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հիման վրա։ Հայկական պատվիրակությունը նշել է, որ ցեղասպանության հետ կապված հարցն ավելի դժվար կլինի լուծել, որովհետև այն հոգեբանական խնդիր է հայերի համար։ Ազերը պնդել է, որ հայերի քարոզչությունն է այս հարցը կենդանի պահել, ուստի Հայաստանն էլ պետք է հենց ցեղասպանության հարցի վերջակետը դնի։ Փաստաթղթում նշվում է, որ փետրվարի 3-ին Ստամբուլում կայացած նստաշրջանից հետո Վ. Փափազյանի հետ առանձնազրույցի ժամանակ Ազերը հնարավորություն է ունեցել ավելի խորը ուսումնասիրելու հայկական կողմի մոտեցումներն այդ

[17] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-09722 Doc No. C05128065

հարցերի վերաբերյալ։ Ազերը հարցրել է հայկական դրոշի, խորհրդանիշների մասին։ Փափազյանը բացատրել է, որ դրոշի գույները կապույտ, կարմիր, նարնջագույնն են, որոնք խորհրդանշում են երկինքը, անկախության համար թափված արյունը և հայոց թագավորությունը՝ համապատասխանաբար։ Խորհրդանշանները ներառում են նաև թագավորական արծիվն ու առյուծը (Ազերի կարծիքով՝ հավանաբար Իրանին անհանգստացնելու համար) և Արարատ լեռան պատկերը։ Ազերը հարցրել է, թե ինչու է հայկական դրոշին թուրքական լեռան պատկեր, և արդյոք դա չի վկայում հայերի շարունակական դիտավորությունների մասին՝ թուրքական տարածքների վերաբերյալ։ Փափազյանը պատասխանել է, որ Արարատը միայն խորհրդանիշ է և ցույց չի տալիս հայերի պահանջները թուրքական տարածքի նկատմամբ։ Ազերը հայտնել է, որ թուրք ժողովրդի համար դժվար կլինի դա ընդունել, ուստի հայերը պետք է բավարար լուծում գտնեն թուրք հանրության կասկածները փարատելու համար։ Ցեղասպանության հարցի վերաբերյալ Վ. Փափազյանը կրկին հղում է արել հարցի հոգեբանական կողմին։ Ազերը շեշտել է, որ հայերը պետք է հասկանան նաև այս հարցի նրբությունը թուրքերի համար։ Նա քննարկումը համարել է երկու կողմից բաց և անկեղծ։ Նա հույս է հայտնել հետագայում նման շփումների, և այդ հանդիպումներից մոտ ապագայում շոշափելի արդյունքներ ստանալու վերաբերյալ, նաև հորդորել է, որ Ալիջան-Մարգարա սահմանադուռը բացվի շուտով, քանի որ սահմանն արդեն «արտահոսք» ունի (հայկական պատվիրակությունը սահմանը հատել է այն մասով, որը դեռ պաշտոնապես բացված չէ) և սահմանադռների բացումը ցույց կտա առաջընթացի ցանկություն Թուրքիայի կողմից։[18] Հանդիպումների մանրամասները պետքարտուղարին փոխանցելու պատճառը ոչ միայն Միացյալ Նահանգների հետաքրքրությունն էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նկատմամբ, այլև այն, որ

[18] Նույն տեղում

փետրվարին 12-ին Ջեյմս Բեյքերը տարածաշրջանային այցով մեկնելու էր նախկին ԽՍՀՄ երկրներ, այդ թվում՝ Հայաստան։[19]

ԱՄՆ Պետդեպարտամենտի արխիվների գաղտնազերծված փաստաթղթերի մեջ է նախագահ Տեր-Պետրոսյանի հետ Ջ. Բեյքերի աշխատանքային ճաշի սղագրության մի մասը, որի ընթացքում կողմերի քննարկման կարևոր թեմաներից մեկը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է եղել։[20] Երևանում նախագահական նստավայրում փետրվարի 12-ին տեղի ունեցած աշխատանքային ճաշի ժամանակ նախագահ Տեր-Պետրոսյանը և ԱՄՆ պետքարտուղարը քննարկել են Լեռնային Ղարաբաղի խնդիրը, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները, և ՀՀ տնտեսական բարեփոխումների ծրագիրը։ Բեյքերը հայտարարել է, որ անհրաժեշտ է, որ լարվածությունը և խռովությունները տարածաշրջանում դադարեն և ողջունել է ՀՀ նախագահի ջանքերը Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ։ Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղին՝ նա նշել է, որ տեսանելի է լարվածության սրման և ընդլայնման հավանականություն, ինչը կարող է բերել նրան, որ ընդգրկի ամբողջ տարածաշրջանը։ ԱԳ նախարար Հովհաննիսյան կարևորել է պատմության նշանակությունը ներկայիս քաղաքականության համար, ինչը չպետք է անուշադրության մատնել։ Պետքարտուղար նշել է ԱՄՆ որոշ մտահոգությունները՝ կապված իրանական ազդեցության հետ, քանի որ, ընդհանուր առմամբ, Իրանի նկատմամբ գոյություն ունեն խոր արմատացած մտահոգություններ, և պնդել, որ թուրքերը կհամագործակցեն Արևմուտքի հետ և ԱՄՆ-ն կաջակցի նրանց այդ հարցում։ Սակայն, մշակութային առումով թուրքերը կապված են Կենտրոնական Ասիայի հետ և հնարավոր չէ, որ թուրքերին չհետաքրքրի այդ տարածաշրջանը։ Պետքարտուղարը հայտնել է նաև, որ ԱՄՆ-ն ուրախ կլինի տեսնել Թուրքիայի և

[19] Baker opens tour of the Caucasus, http://www.nytimes.com/1992/02/12/world/baker-opens-tour-of-the-caucasus.html
[20] Department of State Case No. F-2unnaN-na:AlTh Date:07/22/2016 C17604519.pdf

Հայաստանի միջև առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումը, իսկ հանդիպմանը մասնակցող պետքարտուղարի օգնական Նայլզը հարցրել է շրջափակման վերացման մասին՝ արդյո՞ք դա կծառայի որպես վստահություն հաղորդող միջոց Նախիջևանի սահմանափակումները վերացնելու համար։

Հաջորդ գաղտնազերծված գրությունը՝ «Հայաստանի սահմանի հատման հարցի ընդհանուր համատեքստ» վերնագրով, Անկարայում ԱՄՆ դեսպանատունը ուղարկել է Վաշինգտոն՝ թվագրված փետրվարի 27-ին։[21] Սահմանային մի միջադեպ առիթ էր դարձել, որ թուրքական իշխանությունները կրկին անդրադառնան Հայաստանի հետ սահմանի բացմանը՝ էլ ավելի խստացնելով իրենց դիրքորոշումը։ Թուրքիայի ԱԳՆ փոխնախարար Սանբերկը փետրվարի 26-ին ԱՄՆ դեսպանին հայտնել էր, որ սահմանը փակ է բոլոր տուրիստական և բիզնես ճանապարհորդությունների համար և կբացվի միայն մարդասիրական օգնության համար։ Նա նաև ընդգծել է, որ Թուրքիան կհամաձայնի Հայաստանին մեծ քանակությամբ սննդի մատակարարմանը, եթե մեծ քանակությամբ մատակարարումներ լինեն նաև Նախիջևանին։ Իսկ առիթը թուրք բիզնեսմեն Իշաք Ալաթոնի հրավերով երկու հայտնի ամերիկահայերի՝ Ամերիկայի հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյանի և նույն կառույցի գլխավոր քարտուղար Վան Գրիգորյանի այցն էր Թուրքիա։ Ալաթոնի նպատակը հայ-թուրքական հարաբերությունների զարգացումն էր առևտրային հարաբերությունների բարելավման միջոցով՝ օգտագործելով Տրապիզոնի ազատ նավահանգիստը, կապելու ամերիկա-հայկական բիզնես առաջնորդներին Թուրքիայի և Հայաստանի բիզնեսների հետ։ Ալաթոնին հաջողվել էր հանդիպում կազմակերպել երկու հայերի և Թուրքիայի արտգործնախարար Չեթինի միջև՝ ակնհայտորեն առանց Հայաստանի հարցերով զբաղվող ԱԳՆ այլ պաշտոնյաների իմացության։ Հանդիպման ժամանակ Ալաթոնը և իր գործընկերները տպավորություն են ստացել, որ նախարարը

[21] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-09722

համաձայն է, որ Հովնանյանը և Գրիգորյանը սահմանը հատեն Ալիջան-Մարգարա փակ դարպասով (Կարսի նահանգում, Իգդիրի մոտ)։ Սակայն սահմանին նրանց թույլ չեն տալիս դա անել ու փետրվարի 20-ին և 21-ին ամերիկյան դեսպանատան աշխատակիցները զանգերի տարափ են ստանում Իգդիրում գտնվող Գրիգորյանից։ ԱԳՆ ավագ աշխատակիցների հետ բազմաթիվ կապերից հետո դեսպանատանը վերջապես հաջողվել է քաղաքացիական և ռազմական իշխանություններից ստանալ սահմանային դարպասը հատելու միանգամյա թույլտվություն Գրիգորյանի և Հովնանյանի համար։ Դրան ԱԳՆ աշխատակիցները համաձայնել են դժկամությամբ և կտրականապես ժխտել են, որ նման թույլտվություն է ձեռք բերվել Չեթինի հետ հանդիպման ժամանակ։ Գրությունը նաև ընդգծում է թուրքական մամուլի բացասական արձագանքն այդ իրադարձությանը և արձանագրվում է, որ նախաձեռնությունը չի օգնել հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը, չնայած ներգրավված կողմերի բարի մտադրություններին։[22] Այդուհանդերձ, շփումների ակտիվությունը չի նվազել։ Ճիշտ է, մարտի 21-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի և Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի միջև տեղի ունեցած հեռախոսազրույցի վերաբերյալ գաղտնազերծված փաստաթղթեր չկան՝ բացառությամբ նախագահ Բուշի գրաֆիկում այդ օրվա գրառումից[23], սակայն կա դրա մասին անուղղակի վկայություն։ Նույն օրը Քեմփ Դեյվիդում Գերմանիայի Կանցլեր Հելմուտ Կոլի հետ հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահ Բուշը կրկին անդրադարձել է ԽՍՀՄ փլուզման գործընթացին։ Նա Կոլին տեղեկացրել է, որ առավոտյան խոսել է Լևոն Տեր-Պետրոսյանի հետ՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի կապակցությամբ։ Ըստ Բուշի, Տեր-Պետրոսյանը նախընտրում է երեք պետությունները՝ Հայաստան, Ադրբեջան և Լեռնային Ղարաբաղ, մեկ խմբում

[22] Նույն տեղում
[23] Schedule of the meetings, page 36 https://bush41library.tamu.edu/files/foia/2005-1031-F%20[NSC%20Confidential%20Files].pdf

ձևաչափը: «Մենք կաջակցենք այդ դիրքորոշմանը առաջիկա ԵԱՀԽ հանդիպման ժամանակ: Տեր-Պետրոսյանն ինձ ասաց, որ Թուրքիան անկեղծ չէ: Իրականում ես կարծում եմ Թուրքիան անկեղծ է: Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների հանդիպումը լավ է անցել» տեղեկացնում է Բուշը:[24]

Ապրիլի 2-ին ԱՄՆ Պետդեպարտամենտը հայ-թուրքական սահմանի բացման գործընթացի վերաբերյալ նամակ է ուղարկում Անկարայում և Երևանում ԱՄՆ դեսպանություններին՝ երկու պետությունների իշխանություններին փոխանցելու նպատակով:[25] Դա երկու կողմերին ուղղված հորդոր էր՝ պայմանավորված «վերջին մի քանի շաբաթների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հետ կապված միջնորդության գործընթացում արձանագրված աճող առաջխաղացմամբ՝ զգուշավոր լավատեսությամբ»: Երկրորդ գործոնը, որը նպաստել էր ամերիկյան նախաձեռնությանը, արտգործնախարար Ր. Հովհաննիսյանի նամակն էր ԱՄՆ պետքարտուղարին՝ ներկայացնելով Հայաստանի դիրքորոշումը Թուրքիայի հետ սահմանի ճանաչման վերաբերյալ: Վերջինս դա համարում է լավ հիմք՝ երկխոսություն սկսելու համար, Հայաստանին հորդորում է այդ դիրքորոշումն ուղղել Անկարային, իսկ վերջինիս՝ անաչառության քաղաքականության պահպանման համար մատնանշել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում առաջընթացը: Հայաստանի իշխանություններին ուղղված հատվածում Պետդեպարտամենտը նաև ուրվագծում է իր մոտեցումները Լեռնային Ղարաբաղի խնդրի տեսանելի զարգացումների վերաբերյալ՝ դրանք տարանջատելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրից. «Թուրքիայի կառավարությունը հասկանում է, որ ԱՄՆ կառավարությունը չի կարող թույլ տալ օտար ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը միջամտելը: Թուրքիան հավատարիմ է Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության խաղաղ կարգավորմանը և վճռական դեր

[24] https://bush41library.tamu.edu/files/memcons-telcons/1992-03-21--Kohl.pdf
[25] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604506

կունենա համոզելու Ադրբեջանին՝ միջնորդությունը ընդունելու հարցում: Անկարան նաև Հայաստանի հետ լավ հարաբերություններ ունենալու ցանկություն և կարիք ունի:... Մենք ակնկալում ենք շարունակել աշխատել Թուրքիայի, մեր ՆԱՏՕ և ԵԱՀԽ գործընկերների, և ՄԱԿ-ի հետ՝ լուծում գտնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը՝ բարեխիղճ բանակցությունների հիման վրա»:[26]

Նման ակտիվության պայմաններում դժվար չէ ենթադրել, որ ապրիլի 24-ին ընդառաջ, երբ Հայաստանում պետք է նշվեր Հայոց Ցեղասպանության տարելիցը, Երևանում ԱՄՆ նորաբաց դեսպանությանը պետք է ուղարկվեին հանձնարարականներ պետքարտուղար Բեյքերից, թե ինչպես պետք է իրենց դրսևորեն ամերիկյան դիվանագետները այդ օրերին:[27] Հանձնարարականում մասնավորապես ասվում է. «Ապրիլի 24-ն այն օրն է, երբ համայն աշխարհի հայությունը նշում է ենթադրաբար թուրքերի կողմից կազմակերպված հայերի կոտորածը: ...ԱՄՆ կառավարությունը գիտակցում է ապրիլի 24-ի կարևորությունն ու պատմական դեպքերի նշանակությունը և կմիանա աշխարհի ժողովուրդներին՝ հիշատակին նվիրված միջոցառումների ժամանակ: Հայաստանում ԱՄՆ դեսպանության աշխատակիցներին թուլատրվում է մասնակցել Հայաստանի կառավարության կողմից կազմակերպված բոլոր այն միջոցառումներին, որոնց մասնակցում են և հրավիրված են Երևանում հավատարմագրված դիվանագետները: Նման միջոցառումներին ներկայությունը պարտադիր է: Չնայած դրան, ԱՄՆ կառավարությունը չի ցանկանում, որ իր ներկայացուցիչը այդ միջոցառումների ընթացքում որևէ ձևով առանձնանա, որպեսզի դա չմեկնաբավի որպես ԱՄՆ կառավարության կողմից կոտորածների ճանաչում՝ որպես Ցեղասպանություն, կամ չօգտագործվի Թուրքիայի դեմ քարոզչական պատերազմում: Դրա համար ԱՄՆ դեսպանությունը չպետք է մասնակցի այնպիսի միջոցառումների, որտեղ այլ դիվանագետներ ներկա չեն, կամ որտեղ ամերիկյան

[26] Նույն տեղում

[27] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-09722 Doc No. C05128062, available from foia.state.gov

դիվանագետների ներկայությունը կարող է առավել ցցուն լինել, քան այլոցը: Դեսպանությունը չպետք է որևէ մեկնաբանություն անի դեպքերի վերաբերյալ»: Միաժամանակ, պետքարտուղարի հանձնարարականի մեջ նշվում են, թե ինչ ձևակերպումներ կարող են օգտագործել ամերիկացի դիվանագետները. «1. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ միլիոնավոր մարդկանց մահը սահմաններ չճանաչող ողբերգություն է, որի համար ամբողջ մարդկությունը դեռևս սգում է: 2. ԱՄՆ կառավարությունը հպարտ է գտնվել այս միջոցառմանը, որի ընթացքում մենք սգում ենք հայերի մահը այդ ողբերգական դեպքերի ժամանակ: 3. Վստահ ենք, որ այս միջոցառումը չի կարող խանգարել հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանը, որի արդյունքում տարածաշրջանում կարող է կայություն հաստատվել»:[28] Հեշտ է նկատել, որ հետագա գրեթե 3 տասնամյակի ընթացքում օգտագործվում են նույն բովանդակությունն ունեցող ձևակերպումներ:

Հաջորդ կարևոր իրադարձությունը, որի արձանագրումը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում, ապրիլի 28-ին Սպիտակ Տանն ԱՄՆ նախագահ Բուշի հանդիպումն է Թուրքիայի նախագահ Օզալի հետ:[29] Հանդիպման գաղտնազերծված արձանագրությունից պարզ է դառնում, որ ԱՄՆ ղեկավարությունը այդքան էլ լավ չէր պատկերացնում ոչ Հայաստանում առկա խնդիրները, ոչ էլ Լեռնային Ղարաբաղի խնդրի բուն էությունը: Այդ իսկ պատճառով էլ Թուրքիայի նախագահը բավականին հաջող առաջ է մղել Թուրքիայի, հետևապես նաև Ադրբեջանի շահերից բխող մի շարք առաջարկներ՝ օգտագործելով ԱՄՆ բարդ հարաբերությունները Իրանի հետ, ինչպես նաև Ռուսաստանի հետաքրքրությունները տարածաշրջանում: Հատկապես ուշագրավ է սղագրության հետևյալ հատվածը. «Նախագահ Օզալ. «Հիմա Լեռնային Ղարաբաղի մասին: Լեռնային Ղարաբաղը 80%-ով բնակեցված է հայերով, իսկ 20%՝ ադրբեջանցիներով: Նրանք կարող են

[28] Նույն տեղում

[29] https://bush41library.tamu.edu/files/memcons-telcons/1992-04-28--Ozal.pdf

փոխանակել տարածքներ. Լեռնային Ղարաբաղն անցնի Հայաստանին, իսկ Ադրբեջանը ստանա Հայաստանի այն մասը, որը բաժանում է Ադրբեջանը երկու մասի: Ստալինն է սահմաններն այսպես գծել: Նա Ադրբեջանը բաժանել է, որ տա հայերին նրանց կաշառելու համար:

Պետքարտուղար Բեյքեր. «Ի՞նչ տեղի կունենա հայերի հետ, ովքեր ապրում են հարավային հատվածում, որը Դուք ցանկանում եք տալ Ադրբեջանին:»

Օզալ. «Ընդհանուր առմամբ առավելագույնը 50.000 մարդ ստիպված կլինի տեղափոխվել: Հակառակ պարագայում այս պատերազմը հավերժ կշարունակվի: Թուրքիան լավ հարաբերություններ ունի Հայաստանի հետ, և Հայաստանն ունի Թուրքիայի հետ լավ հարաբերությունների կարիքը: Այդպես վարվելու մեկ այլ պատճառ էլ կա: Կենտրոնական Ասիայի հանրապետությունները Եվրոպայի հետ կապի կարիք ունեն: Նոր ռուսները ցանկանում են լինել ցարական շրջանի ռուսների պես: Նրանք ցանկանում են, որ բոլոր ճանապարհները տանեն դեպի Մոսկվա: Կոմունիստների ժամանակ այն ամենն, ինչ արտադրվում էր, հետո մշակվում էր Ռուսաստանում: Դեռևս այդ պետությունները Ռուսաստանին վերադարձնելու ցանկությունը կա: Ռուսաստանը կարող է սպառնալիք հանդիսանալ այդ պետությունների համար: Հույս ունեմ, ամեն ինչ Ռուսաստանի ձեռքում չեք թողնի: Բոլոր գազամուղները գնում են Ռուսաստան կամ անցնում են Ռուսաստանի տարածքով: Անգամ հիմա Թուրքմենստանի ողջ գազը գնում է դեպի Ռուսաստան: Այսպիսով, նրանք այլընտրանքային ուղիներ են փնտրում, ինչպիսիք են Թեհրանն ու Թուրքիան: Իմ ծրագրով հնարավոր է կապ ապահովել Ադրբեջանով դեպի Թուրքիա և Եվրոպա: Այս պետությունները Եվրոպայի հետ հաղորդակցման ուղիների կարիք ունեն, որոնք շրջանցեն Ռուսաստանը: Մյուս ճանապարհը կանցնի Աֆղանստանով դեպի Պակիստան և Հնդկական օվկիանոս: Կարևոր է, որ այս պետությունները Ռուսաստանից անկախ դառնան՝ ենթակառուցվածքների զարգացման միջոցով»:

Բեյքեր. «Մենք արդեն այդ նույնն անում ենք: Բոլոր պետությունները, բացի Տաջիկստանից, դա են ցանկանում: Ի՞նչ եք կարծում, տաջիկները խոցելի՞ են իրանցիների համար»:

Օզալ. «Ոչ, չեմ կարծում: Կարծում եմ նրանց հետ ամեն ինչ լավ կլինի, քանի որ տաջիկները սուննի են: Բայց Ադրբեջանն է խնդրի լուծման բանալին: Նրանց անհրաժեշտ է միջանցք և Ադրբեջանը կարող է այն ապահովել: Սա նաև շահեկան կլինի Հայաստանի համար»:

Բեյքեր. «Ադրբեջանցիներին կհետաքրքրի՞: Մեզ տեղյակ պահեք: Հնարավոր է՝ պատրաստ լինենք միջոցներ ձեռնարկել: Պետք է ժողովրդագրական հարցերը ճշտենք»:[30]

Այս երկխոսությունը վկայում է, որ միանգամայն հիմնավոր են պնդումները, որ Թուրքիան միանգամայն իրական նպատակներ է ունեցել և ունի Միջին Ասիայի հետ Ադրբեջանի միջոցով ցամաքային կապ հաստատելու և ազդեցության գոտիների ընդլայնման հետ կապված: Ավելին, այն վկայում է, որ ամերիկյան վարչակազմին պետքարտուղարի խորհրդական Փոլ Գոբլի ներկայացրած այսպես կոչված «Գոբլի պլանի» ձևավորման մեջ Թուրքիան պակաս դերակատարություն չի ունեցել:

Ակնհայտ է, որ այս շփումների շրջանակից չէր կարող դուրս մնալ Ղարաբաղյան հակամարտության համար առանցքային նշանակություն ունեցած Շուշիի ազատագրումը մայիսի 9-ին: Երկու օր անց՝ մայիսի 11-ին ԱՄՆ նախագահ Բուշը կարճ հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի վարչապետ Դեմիրելի հետ. «Բուշ. «ԼՂ հարցում, ես տեղյակ եմ, որ դուք ստացել եք մեր ուղերձը: Մենք ցանկանում ենք, որ խաղաղություն հաստատվի: Նաև հասկանում եմ, որ Ձեզ վրա ներքին ճնշում կա: Ես Ձեզ կոչ եմ անում զսպվածություն ցուցաբերել և ռազմական ինտերվենցիայից զերծ մնալ: Իրավիճակը չափազանց բարդ է»:

Դեմիրել. «Ես մեր մարդկանց նույնպես խնդրում եմ զինվել համբերությամբ: Ես նրանց ասում եմ, որ ռազմական ինտերվեն-

[30] Նույն տեղում

ցիան անհնարին է։ Ընդհանրապես մենք այսօր չենք կարող զենքով հարց լուծել։ Մենք կաշխատենք նաև մեր ադրբեջանցի եղբայրների հետ»։

Բուշ. «Նախորդ շաբաթվա վերջին ինձ զանգահարել է նախագահ Տեր-Պետրոսյանը և ես ասել եմ, որ մեզ հարկավոր է խաղաղ կարգավորում։»» [31]

Հաջորդ օրը՝ մայիսի 12-ին, նախագահ Բուշը, հանդիպելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ, նրան տեղեկացնում է, որ Դեմիրելը անհանգստացած է Ադրբեջանի հարցով։[32] Երկխոսությունը վկայում է, որ իրավիճակը հղի էր անսպասելի զարգացումներով. «Բուտրոս Ղալի. «Վախենում եմ մեզ էլ ներքաշեն Լեռնային Ղարաբաղի խնդիր մեջ»։

Բուշ. «Ի՞նչ են խնդրում Ձեզանից»։

Բուտրոս Ղալի։ «Նրանց մշտական ներկայացուցիչը խնդրում է խաղաղապահներ ուղարկել, ինչպես որ Հարավսլավիա ուղարկեցինք։ Նա ասում է.«Մենք ՄԱԿ լիիրավ անդամ ենք։ Ինչու՞ փաստահավաք առաքելություն չեք իրականացնում, ինչու՞ չեք նշանակում հատուկ ներկայացուցիչ։ Մենք հիմա չափազանց ծանրաբեռնված ենք։ Նույնիսկ 200 հոգանոց առաքելություն չենք կարող ուղարկել։ Ուգանդան ու Ռուանդան ինձանից օգնություն են խնդրում, բայց ես չեմ կարող հիմա անել դա»»։

Լուրջ լարվածության մասին են վկայում նաև մայիսի 21-ին Մոսկվայում Թուրքիայի դեսպանության աղբյուրների՝ ԱՄՆ դեսպանությանը փոխանցած տեղեկությունները, որ թուրքական զորքերը զբաղեցրել են համապատասխան դիրք և պատրաստվում են հակահարված տալ հայկական զորքերին, որոնք փորձելու են հարձակվել Նախիջևանի՝ Ադրբեջանը Թուրքիային կապող կամուրջի վրա։ Ըստ նույն աղբյուրի, դա հայկական ագրեսիա է, որի

[31] Դեմիրելի հետ հեռախոսազրույցի սղագրությունը https://bush41library.tamu.edu/files/memcons-telcons/1992-05-11--Demirel.pdf

[32] Բուտրոս Ղալիի հետ հեռախոսազրույցի սղագրությունը https://bush41library.tamu.edu/files/memcons-telcons/1992-05-12--Boutros-Ghali.pdf

նպատակն է Թուրքիային ներքաշել հայ-ադրբեջանական հակամարտության մեջ:[33] Պատահական չէ, որ մայիսի 23-ին Լիսաբոնում Բեյքեր-Հովհաննիսյան հանդիպման ժամանակ[34] Բեյքերն ասում է, որ եկել է բանակցությունների ժամանակը և, որ միջազգային հանրությունը Հայաստանին ընկալում է որպես ագրեսոր: Նա առաջարկում է մոտակա օրերին կազմակերպել ԵԱՀԽ Մինսկի խմբի հանդիպում: Հովհաննիսյանը խնդրում է հանդիպումը կազմակերպել մայիսի 28-ից հետո, քանի որ ուղեկցելու է Հայաստանի նախագահին Եգիպտոս այցի ժամանակ:

Արդեն հունիսից նկատելի է, որ տեղի ունեցող իրադարձություններին ամերիկյան կողմն ավելի զուսպ է արձագանքում: Մասնավորապես, թեև հունիսի 15-ին Ռ. Հովհաննիսյանը հեռախոսակապով Բեյքերին տեղեկացնում է, որ Ադրբեջանը բռնազավթել է Շահումյանի շրջանն ու Լեռնային Ղարաբաղի մի շարք բնակավայրեր, սակայն Բեյքերի արձագանքը հերթապահ ձևակերպումներից չի տարբերվում: Ամերիկյան իշխանությունների հետաքրքրությունը ևս մեկ անգամ սրվում է հունիսի 26-ին նախագահ Բուշի կարճատև հեռախոսազրույցից հետո, որի ընթացքում Թուրքիայի վարչապետ Դեմիրելը տեղեկացնում է, որ Ստամբուլում հանդիպում է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հետ, ովքեր ներկայացրել են իրենց խնդիրները:[35] Հուլիսի 18-ին ԱՄՆ պետդեպարտամենտը ևս մեկ փորձ է անում համոզելու Հայաստանին և Թուրքիային, որ հիմա արագ առաջընթաց ակնկալելը իրատեսական չէ, սակայն հիմա է ժամանակը աշխատելու հարաբերությունների կարգավորման վրա: Պետդեպարտամենտը խրախուսում է Անկարային համաձայնության գալ, քանի որ «Թուրքիայի համար Հայաստանում առկա քաղաքական իրավիճակում Տեր-Պետրոսյանի կառավարությունը լավագույն գործընկերն է, որ թուրքերը կարող են ողջամտորեն

[33] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2013-01627 Doc No. C05436105 available from foia.state.gov
[34] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604482 available from foia.state.gov
[35] https://bush41library.tamu.edu/files/memcons-telcons/1992-06-26--Demirel.pdf

ակնկալել առերեսվելու բանակցությունների սեղանի շուրջ»:[36] Հետաքրքիր է, թե թուրքական իշխանությունների համար նախատեսված դրույթներում ամերիկյան կողմն ինչպես է ներկայացնում Հայաստանում իրավիճակը. «Տեր-Պետրոսյանի կառավարությունը Հայաստանում կանգնած է ներքին ուժեղ ընդդիմության առաջ այն քաղաքական ուժերի կողմից, որոնք դեմ են թուրք-հայկական հարաբերությունների կարգավորմանը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանը խաղաղ բանակցությունների միջոցով»: Սակայն այս փորձը ևս ապարդյուն եղավ:

Ամերիկյան կողմը գաղտնազերծել է նաև օգոստոսի 11-ին Հայաստանի ԱԳ նախարարի նամակն՝ ուղղված ԱՄՆ պետքարտուղարին:[37] Այն հուզառատ է՝ կապված ռազմական ինքնաթիռների կիրառմամբ Արծվաշենի բռնազավթմանն ու Ստեփանակերտում և Կոռնիձոր գյուղում (ՀՀ տարածքում) ադրբեջանական զինուժի իրականացրած ավերածություններին, սակայն այս դեպքում ևս ամերիկյան արձագանքները՝ արդյունքների տեսակետից, նույնն էին: Պատճառները կարող էին լինել մի քանիսը: ԱՄՆ հերթական նախագահական ընտրություններին մնացել էր 2-3 ամիս և վարչակազմը չէր կարող կտրուկ քայլեր անել, որոնք կարող էին դառնալ հասարակական կարծիքի վրա ազդեցության առարկա: Կարող էին նաև ինչ-ինչ խնդիրներ լինել՝ Թուրքիային և Ադրբեջանին առնչվող, որոնք հնարավոր է բացահայտել միայն Թուրքիայի և Ադրբեջանի վերաբերյալ գաղտնազերծված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում: Հեշտ է նկատել, որ այդ շրջանում նկատելի են դիրքորոշումների փոփոխություններ նաև հայաստանյան պաշտոնական շրջանակներում: Սեպտեմբերի 10-ին, Ստամբուլում ելույթ ունենալով Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի նիստում, Ռաֆֆի Հովհաննիսյանը Թուրքիային մեղադրել էր ԼՂ հարցի կարգավորման աշխատանք-

[36] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604463
[37] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-03553

ներում ադրբեջանամետ քաղաքականության համար, մարդու իրավունքները խախտելու մեջ և իր խոսքում հիշատակել է Հայոց Ցեղասպանության փաստը: Այդ ելույթի հետևյալ հատվածը սեպտեմբեր 13-ին Անկարայում ԱՄՆ դեսպանությունը ներառել է պետքարտուղարին ուղղված զեկուցագրում.[38] «Ի հեճուկս ցեղասպանության ողբերգությանը, նախագահ Տեր-Պետրոսյանը ակտիվորեն հետամուտ է լավ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ. Այնուամենայնիվ, մինչ օրս Թուրքիան մերժել է հայկական նախաձեռնությունները, ժամանակ առ ժամանակ խոչընդոտել Հայաստանին մարդասիրական օգնության փոխադրմանը, և չի պահպանել չեզոքություն (այպիսով՝ դառնալով ներգրավված կողմ) Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում: Թուրքիան զսպված մոտեցում է ցուցաբերել Հայաստանի՝ Եվրոպայի Խորհրդում հատուկ հյուրի կարգավիճակին և ի վերջո անդամակցությանը: Թուրքիան նմանապես ձգտել է խոչընդոտել Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդին Հայաստանի անդամակցությանը: Թուրքիան, չնայած Խորհրդում ավագ անդամ լինելուն, պետք է դեռ դրսևորի եվրոպական արժեքներին իր հավատարմությունը: Թուրքիայում մարդու իրավունքների կոպիտ խախտումների պատճառով ակնհայտորեն այն կարգավիճակում չէ, որ խոչընդոտի Հայաստանի անդամակցելուն Խորհրդին: Խորհրդում Հայաստանի կարգավիճակը չի կարող արհեստականորեն կապվել իր սահմաններից դուրս ընթացող հակամարտության կամ Ադրբեջանի կարգավիճակի հետ, որը զգալիորեն ետ է Հայաստանից եվրոպական արժեքներին իր հավատարմության դրսևորման հարցում: Չնայած նոր հորինված «էթնիկ զտում» եզրույթը Լեռնային Ղարաբաղի հայերին վաղուց ծանոթ է և իր մայրաքաղաք Ստեփանակերտը Սարանոյի նույն ահարկու պատկերն է արտացոլում, Եվրոպան նույն արագ և արդյունավետ միջոցները չկիրառեց Լեռնային Ղարաբաղում, ինչը կիրառել էր Բոսնիա և Հերցեգովինայի դեպքում»: Զեկուցագրում նշվում է նաև,

[38] UNCLASSIFIED U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604300 Date:

որ «Հայաստանի նախագահը այդ ելույթին թեև ուշ, բայց ուժեղ պատասխան» է տվել իր խոսնակ Ռ. Շուգարյանի միջոցով, որը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ այդ ելույթը չի համապատասխանել լսարանին, այն կարող էր հասցեագրված լինել հայկական սփյուռքի որոշ խմբերի, բայց ոչ՝ ներկայացվեր Թուրքիայի մայրաքաղաքում, իսկ որոշ դրույթներ չէին համապատասխանում պետական քաղաքականությանը:

Արտգործնախարարի ելույթից իր դժգոհությունը երկրի նախագահը չի թաքցրել հոկտեմբերի 2-ին ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ռիչարդ Կոզլարիչին ընդունելիս: Վերջինիս՝ Վաշինգտոն ուղարկված զեկուցագրում առկա են իրավիճակը բնութագրվող մի շարք ձևակերպումներ:[39] Շեշտելով, որ հանդիպումը խորհրդապահական է, նախագահը ներկայացնում է մի շարք դատողություններ հակամարտության վերաբերյալ. «Լեռնային Ղարաբաղի խնդիրը Հայաստանին դուրս է մղել զարգացման իր բնականոն ճանապարհից: Մնացյալ աշխարհի հետ մեր հարաբերությունները արգելափակվել են հակամարտության պատճառով: Չնայած Հայաստանն ակտիվորեն ձեռք է բերում առավել խոր և երկկողմ ձեռնտու հարաբերություններ Իրանի և Թուրքիայի հետ, այդուհանդերձ այդ հարաբերությունները չեն կարող ավելի խորանալ զինադադարի բացակայության պայմաններում»: Տեր-Պետրոսյանը նաև հայտնում է, որ Հայաստանի միակ իրական տնտեսական գործընկերը Ռուսաստանն է և դա տրամաբանական է՝ հաշվի առնելով տարածաշրջանի պատմական զարգացումները: Տեր-Պետրոսյանը տեղեկացնում է, որ 4 օր առաջ իրավիճակը ողբալի է եղել, Հայաստանում ցորեն չի եղել և նա զանգահարել է Ելցինին՝ խնդրելով օժանդակել ցորենի առաքման հարցում: Վերջինիս աջակցությամբ Բաթումից Հայաստան է մատակարարվել 1000 տոննա ցորեն: «Եթե հացահատիկը մեզ հասներ երկու օր ուշացմամբ, հավանաբար մեր կառավարությունն այլևս գոյություն

[39] U.S. Department of State Case No. F-2009-03553 Doc No. C17604294 available from foia.state.gov

չէր ունենա» ասել է Տեր-Պետրոսյանը։ Նա նաև նկատել է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը ամենակարևոր բանն է։ Իսկ դրա միակ երաշխիքը ինքնապաշտպանությունն է։ «Դա պետք է փոխարինել միջազգային երաշխիքներով և երբ դա տեղի ունենա, ծայրահեղականությունը (նկատի է առնվում Լեռնային Ղարաբաղի հայերի) կվերանա։ Նախագահը ամերիկյան կողմին նաև տեղեկացնում է, որ խնդիրը բարձրացրել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ հանդիպման ժամանակ, ով հայտարարել է, որ ՄԱԿ-ը սատարում է Մինսկի խմբին և կարիք չկա, որ ՄԱԿ-ը ներքաշվի այս խնդրի մեջ։ Տեր-Պետրոսյանը նաև առաջարկել է Բուտրոս Ղալիին ստեղծել ԵԱՀԽ-ՄԱԿ մի յուրահատուկ ձևաչափ, եթե ԵԱՀԽ-ն չաշխատի»։

Հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, հրամանագիր ստորագրեց Ռաֆֆի Հովհաննիսյանին՝ իր դիմումի համաձայն, աշխատանքից ազատելու վերաբերյալ, իսկ նոյեմբեր 3-ին ԱՄՆ-ում տեղի ունեցան հերթական նախագահական ընտրությունները։ Ընտրություններում Բուշը պարտվեց և նախագահ դարձավ դեմոկրատական կուսակցության թեկնածու Բիլ Քլինթոնը։ Ամերիկյան վարչակազմի փոփոխությունը, Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների նկատմամբ հզոր ներքին ճնշումները, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող զարգացումներն ու դրանց արդյունքում Թուրքիայի ադրբեջանամետ դիրքորոշման ամրապնդումը էապես նվազեցրեցին հարաբերությունների կարգավորման հեռանկարը, հետևաբար նաև ամերիկյան ջանքերը։

Եզրակացություն

1991 թվականի դեկտեմբերին, Հայաստանի անկախությունը ֆորմալ ճանաչելուց անմիջապես հետո ԱՄՆ-ն պաշտոնապես հանձն առավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական սահմանի բացման միջնորդական առաքելությունը։ Եթե հայկական կողմի մոտեցումները լիովին համահունչ էին

ամերիկյան կողմի ձգտումներին, ապա Թուրքիայի առաջադրած տարատեսակ նախապայմանները խիստ անբարենպաստ էին հարաբերությունների կարգավորման համար։ Նախ, Անկարան ԱՄՆ կառավարությանը հայտնել էր, որ հաշտեցման գործընթացը առաջ կտանի, եթե Հայաստանը հայտարարություն տարածի, որով կհրաժարվի Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից և կճանաչի գոյություն ունեցող փաստացի սահմանները։ Հատկանշական է, որ Հայաստանի որևէ ղեկավար անձ երբևէ Թուրքիայի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի տարածքային պահանջ չէր ներկայացրել։ Սակայն թուրքական կողմում հավանաբար հաշվարկ կար առ այն, որ ապագայում, սահմանները բացելու և դիվանագիտական հարաբերությունները հաստատելուց հետո, ավելի բարդ կլիներ ճնշումներին հակազդելը, եթե հայկական կողմը այդուհանդերձ առաջ քաշեր ինչ-ինչ տարածքային պահանջներ։ Հավանաբար կար նաև մտավախություն, որ Հայաստանի եթե ոչ այս, ապա հաջորդ իշխանությունները կարող են նման պահանջներ առաջ քաշել, մանավանդ, եթե հաշվի առնվի, որ Հայաստանի որոշ ընդդիմադիր ուժեր, ինչպես նաև սփյուռքյան կառույցներ, անընդհատ առաջ էին քաշում Թուրքիային պահանջներ ներկայացնելու հարցը։ Պետդեպարտամենտի դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ այն էր, որ հայկական քաղաքական իրավիճակում Տեր-Պետրոսյանի կառավարությունը լավագույն գործընկերն է, որը թուրքերը կարող են ողջամտորեն ակնկալել բանակցությունների սեղանի շուրջ։ Հետևաբար թուրքերը պետք է համաձայնության գան հիմա կամ առերեսվեն այդ հնարավորությունը կորցնելու ռիսկի հետ։

Երկրորդը նախապայմանը Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դադարեցումն էր։ Թուրքիայում հավանաբար կարծում էին նաև, որ Ցեղասպանության հարցի չներառելը Հայաաստանի արտաքին քաղաքական օրակարգ ժամանակավոր հարց է և Հայաստանը մի օր այն ներառելու է իր օրակարգ՝ հասնելու Ցեղասպանության միջազգային ճանաչմանը։ Ավելին, հավանաբար հասկանում էին նաև, որ որքան էլ Հայաստանը հանի

իր օրակարգից այդ հարցը, միևնույնն է չի կարող ազդել սփյուռքի՝ մանավանդ ամերիկահայ սփյուռքի վրա, որի ստեղծած լոբբիստական կազմակերպությունների թիվ մեկ առաջնահերթությունը Ցեղասպանության ճանաչումն էր: Այդ առումով Անկարան որևէ կերպ չէր կարող մեղադրել Երևանին Ցեղասպանության միջազգային ճանաչման այն փորձերի համար, որոնք նախաձեռնվում էին սփյուռքի կողմից: Հետևաբար, այս նախապայմանի առաջադրումը ակնհայտորեն վկայում է, որ այն միայն նպատակ ուներ հարաբերությունների կարգավորումից խուսափելու իրական մտադրությունները քողարկելու համար: Չի բացառվում, որ Թուրքիան նախապայմաններ էր առաջ քաշում մեկ նպատակով՝ հասնելու նրան, որ հայկական կողմը հրաժարվի բանակցություններից՝ հղում անելով այս կամ այն նախապայմանի կատարման անհնարինությանը:

1991թվականից սկսած Հայաստանին և Թուրքիային հաշտեցնելու փորձեր ԱՄՆ բոլոր վարչակազմերն էլ նախաձեռնել են՝ առանց որևէ բացառության: Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը ուղղակիորեն բխել է և շարունակում է բխել ԱՄՆ շահերից մի քանի առումներով: Հարաբերությունների կարգավորմամբ ԱՄՆ-ն հնարավորություն էր ստանում առավել ակտիվ ներգրավվածություն ունենալ Հարավային Կովկասում և Սև ծովի ավազանում՝ Թուրքիայի միջոցով, կամ Թուրքիայի աջակցությամբ: Սա նաև բխում էր ԱՄՆ ռազմավարական շահերից, որոնք կապված են երկարամյա ախոյան Իրանի և Իրաքի հետ: Բացի այդ, հավանաբար ենթադրվում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից և Վրաստանից էապես կնվազեր, քանի որ Հայաստանը այլընտրանքային ճանապարհ կունենար դեպի աշխարհ: Այս պարագայում ավելի հեշտ կլիներ լրացուցիչ ճնշումներ գործադրել Հայաստանի իշխանությունների նկատմամբ՝ նվազեցնելու Իրանի հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունները, քանի որ հենց Թուրքիան Հայաստանի համար կարող էր դառնալ այլընտրանքային ճանապարհ դեպի

Սևծովյան տարածաշրջան, Եվրոպա և Մերձավոր Արևելք: Հայ-թուրքական սահմանի բացումն ու հարաբերությունների կարգավորումն իր հերթին կնշանակեր Ռուսաստանի ազդեցության թուլացում ամբողջ Հարավային Կովկասում, մանավանդ հաշվի առնելով Վրաստանի ձգտումը դեպի Եվրոպա և Ադրբեջանի ձգտումը դեպի Թուրքիա: Սակայն այս ամենը կարող էր գործոն դառնալ միայն այն դեպքում, երբ Հայաստանը երաշխիքներ ունենար, որ Թուրքիան մի օր կտրուկ չի փոխի իր մոտեցումը: Մինչդեռ, որևէ մեկն, անգամ ԱՄՆ-ն չի կարող դա երաշխավորել Թուրքիայի դեպքում:

Ամենայն հավանականությամբ այս նկատառումներն ի նկատի ունենալով, միաժամանակ, հաշվի առնելով ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի հյուծված վիճակը, դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր (1992թ. հունվարի 7) մինչ Ջորջ Բուշի պարտությունը ԱՄՆ նախագահական ընտրություններում (1992թ. նոյեմբերի 3) տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության կարևորագույն առաջնահերթություններից է դառնում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը՝ ամերիկյան ակնհայտ միջամտությամբ: Դա վկայում է, որ թեև, ի տարբերություն այլ համադրելի դեպքերի, ԱՄՆ-ն տարածաշրջանի նկատմամբ ընդունված ռազմավարություն չի ունեցել[40], այդուհանդերձ Հարավային Կովկասն ու Սևծովյան տարածաշրջանը ԱՄՆ համար շատ կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն են ունեցել:

Միաժամանակ, այդ նպատակով Բուշի վարչակազմը ջանքեր էր գործադրում՝ թույլ չտալու համար Թուրքիայի ներգրավումը Ղարաբաղյան հակամարտության մեջ, ինչը ոչ միայն հակասում էր տարածաշրջանում ԱՄՆ շահերին, այլև կարող էր սադրել Ռուսաստանին առավել կոշտ քայլերի, ինչն էլ իր հերթին լրացուցիչ բարդություններ կառաջացներ ԱՄՆ՝ տարածաշրջանում ամրապնդվելու ջանքերին: Թուրքիայի հնարավոր ներքաշումը

[40] **Gevorgyan N.**, Armenian-American relations in the context of the US foreign policy priorities in the South Caucasus region 1991-2001, Yerevan, 2012.

Ղարաբաղյան հակամարտության մեջ Անկարային կդարձներ հակամարտության կողմ՝ առավել բարդացնելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարը։ Հետևաբար ԱՄՆ-ի համար հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դիտարկվում էր ոչ միայն երկկողմ հարաբերությունների համատեքստում, այլև ուներ կարևոր տարածաշրջանային նշանակություն՝ ամերիկյան ազգային և անվտանգային շահերի առաջ մղման տեսանկյունից։

The administration of the 41st President of the United States, George Bush as moderator in the process of normalization of the Armenia-Turkey relations

SUREN SARGSYAN
Brusov State University

The purpose of this paper is to study the foreign policy of the administration of the 41st President of the United States, George Bush as well as the efforts and motives for normalization of the relations between newly independent Armenia and Turkey. The collapse of the USSR was an opportunity for the United States to establish relations and use public diplomacy as well as soft power toward newly independent states, including Armenia. Efforts to normalize Armenian-Turkish relations were made using both public policy and behind-the-scenes diplomacy. In order to study the policy and diplomacy for the normalization of the Armenian-Turkish relations, a number of scientific works and the information flows of the time were studied. Also, many interviews were conducted with former officials involved in the process. In order to understand the efforts made for the normalization of the Armenian-Turkish relations in the early 1990s, behind-the-scenes diplomacy of the US administration was also studied, taking into account the confidentiality and complexity of that process. The declassified documents of the White House, the State Department, the National Security Council, as well as other state institutions were the subject of a separate study.